ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Աղբերք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերեն (12 դասաժամ),ինֆորմատիկա (4 դասաժամ), ֆիզիկա(7 դասաժամ)առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցներ իգիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին կարող է մասնակցել ուսուցչի պաշտոնին ներկայացվող «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1),
2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձնագիր,
4) աշխատանքային գրքույկ,
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021թ. նոյեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. նոյեմբերի 11-ին ժամը 14:00-ին, Գեղարքունիքի մարզի Աղբերք գյուղի միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Աղբերք:

Հեռախոս՝ (098) 03-23-09